# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ


«      »  __________ 2019թ.    ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

N: ______________________    հեռ.  (0312) 3-26-10


## ՈՒՂԵՐՁ
## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ հայրենակիցներ

Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակման այս օրն աշխարհում սփռված համայն հայությունը գլուխ է խոնարհում և հարգանքի տուրք մատուցում անցյալ դարասկզբին Օսմանյան Թուրքիայում ցեղասպանության զոհ դարձած ավելի քան մեկուկես միլիոն անմեղ նահատակների հիշատակի առջև:

Շուրջ մեկ դար առաջ տեղի ունեցած ողբերգությունը շարունակում է չսպիացող վերք մնալ մեր հոգիներում և պատմական գիտակցության մեջ:

Սիրելի հայրենակիցներ, համոզված ենք, որ պատմական արդարության վերականգնումն անխուսափելի է:

Խոնարհվելով անմեղ զոհերի հիշատակի առջև՝ աշխարհասփյուռ հայությանը ցանկանում եմ միասնություն՝ հանուն հայոց պատմության և հայ ժողովրդի լուսավոր ապագայի:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ